

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ**

Տարբեր է լեզուն՝ ալեխոռով ծովուն,
Տարբեր՝ կը խօսի, երբ խաղա՛ղ է ան:

Կանաչուն ծառին խշշոցն ուրի՛շ է,
Ուրի՛շ է լեզուն՝ մերկացած ծառին:

Մրմունջն ուրիշ է՝ դուրեկան հովին,
Տարբեր՝ կը խօսի սաստկաշունչ քամին:

Ծովերը մեզի տարբեր կը խօսին
Երբ ալեկոծ են եւ կամ հանդարտիկ,
Երբ հոգիներ մեր՝ շէն են կամ մթին:

Տարբեր՝ կը խօսին ծառերն ամէնուր
Երբ իրենց շուքին՝ սրտեր կարօտած՝
Զիրար կը գտնեն կամ կը մեկնին լուռ:

Ուրի՛շ է լեզուն՝ հովին, քամիին
Երբ մեզ կը բերեն լուրեր անձկալի
Կամ իղձ մը գողտրիկ՝ կ'առնեն, կը տանին:

Մեզմէ դուրս իրերն ու երեւոյթներ՝
Իմաստ կը զգենուն, իրենցմո՛վ, մեզմո՛վ,
Կ'ըլլան մերթ վանող ու մերթ հոգեթող:

ՎԱՐԴ ՇԻԿԱՏԵՐ